

Բ Ե Պ Մ Ե Ա Լ Գ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԵՍՒՐԵԱԿԱՆ

Գ Ի Տ Ե Լ Ե Ը Յ

Բ • Տ Ա Ր Ի, Թ Ի Ի 5.

1844

Մ Ա Ր Տ Ի 1.

ԲՆԱԿԱՆ Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն

ԲՆԱԲԱՆՈՒ Թ Ի Ի Ն

Նախադասություններ

ՆԱԿԱԿԱՆ ԿԵՆՊԱՆԻՆԵՐԷՆ ՈՒՄԱՆՔ ՈՂ ատենին՝ շատն ալ մեռնելէն ետև փոսփորականութիւն կ'ունենան, այսինքն իրենց մէկ մասնաւոր գործարանը կամ ամբողջ մարմինն լուսաւոր կերևնայ : Չկներուն մէջ անուանի են աս կողմանէ ընկա ու Գլխա ըստած ձկները . իսկ խեցեմորթներուն ու ժժմուկներուն մէջ փոսփորականութիւն ունեցող աւելի շատ կը գտնուի : Բայց ծովային փոսփորականութիւն ըսելով սովորաբար կ'իմացուի ան երևոյթը որ գիշեր ատեն ծովը պզտի շարժում մ'առնելով լուսաւոր կ'երևնայ . մանաւանդ ամառ գիշերները : Երևոյթը խիստ շատ կը պատահի Վենետիկի ծովակին մէջ . հոն ալ աւելի ան տեղուանքը, ուր որ ջրերը լճացած կը կենան . որով կերևնայ թէ ջրին մէջի փտտած նիւթերը կամ մանր կենդանիներն են փայլողները : Վափուի քովերն ալ փոսփորականութիւն շատ կը պատահի, և Սիլերկրական ծովուն ուրիշ կողմերը երբեմն այնչափ սաստիկ կ'երևնայ որ ձկնորսութիւն ընելը անկարելի կ'ըլլայ հոն . վասն զի ձկները անոր լուսովը կը տեսնեն ուղեւորներն ու կը փախչին : Ուրիշ շատ տեղուանք ալ կ'երևնայ փոսփորականութիւն, ինչուաննաւ Սքանտինաւիայի ցուրտ ծովերուն մէջ :

Պէնէ ' անունով գաղղիացի բնագէտը շատ քննութիւններ ըրաւ ծովային փոսփորականութեան վրայ . ասիկայ երկու տեսակ կը սեպէ փոսփորականութիւնը . մէկը ծաւալ լոյս մը, որ ելեքտրականութենէ առաջ եկած կը համարի, մէկալը՝ լուսաւոր մարմիններ են կ'ըսէ : Ար պատմէ թէ ինքը գիտեր է որ երբ ծովը լուսաւոր կ'երևնայ՝ միշտ փոսփորականութիւն ունեցող ձկներ կը բռնուին . քանի մը մեղուսաներ ալ բռնել է որ ջրի մէջ դրուելով փոսփորականութիւն կուտան եղեր այլևայլ կողմերէն . ձեռքով ալ մեղուսային մարմինը ճրջմելով չորս գիշն լուսաւոր հեղուկ մը կ'ելլէր կ'ըսէ, որ կրնար նաև ժողովիլ վրայէն :

Պէնէ ' անունով գաղղիացի բնագէտը շատ քննութիւններ ըրաւ ծովային փոսփորականութեան վրայ . ասիկայ երկու տեսակ կը սեպէ փոսփորականութիւնը . մէկը ծաւալ լոյս մը, որ ելեքտրականութենէ առաջ եկած կը համարի, մէկալը՝ լուսաւոր մարմիններ են կ'ըսէ : Ար պատմէ թէ ինքը գիտեր է որ երբ ծովը լուսաւոր կ'երևնայ՝ միշտ փոսփորականութիւն ունեցող ձկներ կը բռնուին . քանի մը մեղուսաներ ալ բռնել է որ ջրի մէջ դրուելով փոսփորականութիւն կուտան եղեր այլևայլ կողմերէն . ձեռքով ալ մեղուսային մարմինը ճրջմելով չորս գիշն լուսաւոր հեղուկ մը կ'ելլէր կ'ըսէ, որ կրնար նաև ժողովիլ վրայէն :

1 Գ. Փոսփորեսցենս Երևոյ 337, 338.

1 Bennet.

2 Տե՛նիլ անուր :

Ուրիշ բնագէտներ ալ զանազան քննութիւններ ըրին աս ծովային փոսփորականութեան պատճառին ու երևոյթներուն վրայ, և զանազան փորձերով ու մանրացուցով իմացան թէ ծովային փոսփորականութիւնը գործարանաւոր մարմիններէ կամ կենդանիներէ կ'ելլէ, և ասոնք այլ և այլ կարգի կենդանիներ են, այսինքն մէյմը՝ զանազան խեցեմորթներ, անոնց մէջ ալ երկբացիկ խեցեմորթ մը որ խիստ սաստիկ լոյս կուտայ. երկրորդ, զանազան կակղամիս կենդանիներ, ինչպէս պողկպողները՝ և այլն. երրորդ, շատ կենդանաբոյսեր, ինչպէս մեդուսան : Քանի մը ծովերու մէջ ալ գտան որ նոյն փոսփորականութիւնը առաջ կուգայ մանր ու դեղին ճճիներէ, որ փոշիի պէս ծովուն մէջ կը լողան. չկրցան մանրացուցով ալ աս ճճիներուն վրայ և ոչ պզտի շարժում մը տեսնել. բայց անտարակոյս են որ ասոնք ալ կենդանի մարմիններ են : Սանտուիչ կըզգիներուն ու Սալաքայի նեղուցին մէջ գտնուած ճճիները մասնաւոր ձևով մը երևցեր են. առջինները թափանցիկ գնտաձև են եղեր՝ մէջ տեղը դեղնագոյն կէտով մը. իսկ երկրորդները ընդհանրապէս ձուռաձև ու դեղնագոյն :

Բնագէտները աս բանս ալ դիտած են՝ թէ կենդանեաց վրայ տեսնուած փոսփորականութիւնը մասնաւոր հիւթ մըն է որ կենդանիք իրենց մարմինէն դուրս կուտան, բայց իրարմէ տարբեր կերպերով : Սմանք, ինչպէս մանր խեցեմորթները, դուրս կը հանեն ան հիւթը՝ երբոր կերպով մը գրգռես զիրենք. ուրիշները քանի որ ողջ են՝ կը փախիւրլին, ումանք ալ մեռնելէն ետքը :

1 Լիպոտոս :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լապաստակ և Նոփար :

ԿԵՆԴԱՆԵԱՑ մէջ ամենէն վախկոտը նապաստակն՝ է : Ընկենդանին աշխարհիս գրեթէ ամէն կողմերը գտնուելով՝ ամենուն ծանօթ է, մանաւանդ հասարակ տեսակը : Ուրիշ անդամազննական զարմանալի յատկութիւններէն զատ՝ աս ալ դիտելու բան մըն է աս կենդանւոյս վրայ, որ բերնին ներսի կողմը մագոտ կամ բրդոտ է : Ընթիւն օտուրները կարճ ու ետեխները երկայն ըլլալուն համար՝ խիստ արագ կը վազէ. թէպէտ անով ալ իր թշնամիներուն ձեռքէն չկրնար ազատիլ : Սիսը Լըրոպացուց առջևը շատ յարգի է. մորթն ալ գլխարկ շինելու կը գործածեն :

Սայելուչ կը համարինք հոս դնել Ողիմպիանու անունով գտնուած առակը, որուն մէջ նապաստակին վախկոտութիւնը խիստ աղէկ ստորագրուած է. թարգմանութեանը գեղեցկութիւնն ալ նոր աղուորութիւն մը տուած է առակին :

Լապաստակք ՚ի մի վայր եկեալք, Մեզ, ասեն, կեանքս անկեանք են. քանզի արծուիք և շունք և ամենայն ինչ ՚ի վերայ մեր հարեալ են, և բազմադիմի կիրք պատեալ ունին զմեզ. և արդ լու է հոսիլ ՚ի լիճս յայս և հեղձուուլ : Եւ իբրև այս կամ եղև, և էին սոքա ամենեքեան միաբան, ՚ի լճափին գորտքն զընթացս նոցա զգացեալ երկիւղիւ ընկղմեցան ՚ի խորագոյնս լճին. և մի ոմն ՚ի նապաստակացն՝ որ ծերագոյն էր իմացեալ որ ինչ եղևն, կացէք, ասէ, ո՞վ սիրելիք և դադարեցէք ստգտանելով զանձինս, քանզի են և այլ երկնոք քան զմեզ :

Շատ տեսակ կը համրուի հիմա նապաստակը, և գլխաւոր տեսակներէն մէկն է ճագար՝ ըսուածը. ասոր վրայ կ'արժէ որ քիչ մը երկայնկեկ խօսինք :

1 Դավան : Լատ. Lepus timidus. Գղ. Lievre.
2 Արա Դավանը : Լատին. Lepus cuniculus. Գղ. Lapin.